ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Մարկոսյան Ա., Մարկոսյան Մ. (2023), Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների ու ծախսերի բաշխման գնահատումը, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(3), 50-68, DOI: 10.52174/29538114_2023.3-50
Ներկայացվել է խմբագրություն՝ 23.11.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 24.11.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 25.12.2023 թ.

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0002-5077-4253

ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
«Քաղաքագիտական, իրավագիտական և տնտեսագիտական հետազոտությունների և կանխատեսումների» ՀԿ տնտեսական վերլուծաբան, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-3608-0375

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Բնակչության կենսամակարդակի ցուցանիշների համակարգում կարևոր և անփոխարինելի տեղ ունեն բնակչության դրամական եկամուտները, որոնք հիմք են հանդիսանում տնային տնտեսությունների կողմից ծախսերի իրականացման համար: Այդ տեսանկյունից կարևորվում են ինչպես բնակչության դրամական եկամուտների, այնպես էլ ծախսերի չափումը և գնահատումը: Թեև իր բնույթով բնակչության դրամական եկամուտների (ծախսերի) ապահովումը սոցիալական քաղաքականության կարևոր գործիք է, սակայն բնակչության տարբեր շերտերի միջև պետք է ապահովվի դրանց որոշակի համամասնությամբ բաշխում: Այդ խնդիրը լուծվում է բնակչության ըստ դեցիլային և քվինտիլային խմբերի միջև եկամուտների (ծախսերի) բաշխման միջոցով: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության բնակչության դրամական եկամուտների և ծախսերի բաշխումը 1996–2021 թթ.: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- *վերլուծել ՀՀ բնակչության դրամական եկամուտների և ծախսերի անհամաչափ բաշխումն ըստ առանձին դեցիլային և քվինտիլային խմբերի,*
- *բացահայտել այդ ոլորտում տեղ գտած բացթողումները և դրանց պատճառները,*
- *սոցիալական քաղաքականության թիրախ դարձնել ոչ միայն աղքատության նվազեցումը, այլև միջին խավի ձևավորումը:*

Հիմնաբառեր. *բնակչության դրամական եկամուտներ (ծախսեր), տնային տնտեսություններ, եկամուտների և ծախսերի բաշխում, բնակչության դեցիլային խմբեր (քվինտիլային խմբեր), բնակչության ապահովված խմբեր, եկամուտների (ծախսերի) անհավասար բաշխում, միջին խավի ձևավորում*

JEL: E24, H31
DOI: 10.52174/29538114_2023.3-50

Ներածություն: Բնակչության կենսամակարդակի ցուցանիշների համակարգում կարևոր տեղ ունեն բնակչության դրամական եկամուտները և ծախսերը: Հոդվածում վերլուծվել է ՀՀ բնակչության դրամական եկամուտների (ծախսերի) բաշխման անհավասարությունը, բացահայտվել են դրա առաջացման պատճառները, ինչպես նաև քննարկվել է հասարակության ներսում եկամուտների բաշխման և վերաբաշխման գործում տեղ գտած կառուցակարգերի իրացման արդյունավետությունը: Թեև գույքային անհավասարության վերացման գործիքների շարքում Հայաստանի երրորդ հանրապետությունում զգալի տեղ է հատկացվել խնդրի կարգավորման իրավական գործիքներին, հեղինակները պաշտպանում են այն տեսակետը, որ առաջնայնությունը պետք է տրվեր տնտեսական գործիքներին և լծակներին: Այդ միջոցով հասարակության ստեղծած արդյունքների բաշխումը հօգուտ բնակչության ցածր և միջին եկամուտ ունեցող խավերի կդիտարկվեր որպես ավելի «էժան» և արդար միջոցառում, որից կշահեր ողջ հասարակությունը:

Չնայած վիճակագրական մարմինների կողմից լայնորեն կիրառվող՝ բնակչության դրամական եկամուտների և ծախսերի բաշխման դեցիլային և քվինտիլային մոտեցման տարածմանը, հեղինակներն առաջարկում են բնակչության դրամական եկամուտները և ծախսերը բաշխել ըստ աղքատ, միջին և հարուստ խմբերի, ինչպես նաև փոփոխել այդ ոլորտում եկամուտների բաշխման սկզբունքը՝ ելնելով այն մոտեցումից, որ ոչ միայն պետք է պայքարել աղքատության նվազեցման համար (մանավանդ որ դա ոչ թե նվազում, այլ ավելանում է), այլև այդ ոլորտի քաղաքականությունն ուղղել միջին խավի ավելացմանը:

Գրականության ակնարկ: Վ. Պարետոյի ձևակերպմամբ՝ «ամբողջ հարստության 80%-ը պատկանում է բնակչության 20%-ին»: Նա իր աշխատանքներում պնդում է, որ «եկամտի բաշխման եղանակը, ըստ էության, նույնն է տարբեր երկրներում և պատմական տարբեր դարաշրջաններում»: Պարետոյի օրենքում տրված թվերը չեն կարող միանշանակ դիտարկվել. դա ավելի շատ կանոն է, քան իրական թվային չափանիշներ[1]:

[1] Պարետոյի կանոն (Պարետոյի օրենք, Պարետոյի սկզբունք, 20/80 կանոն), https://imarketlab.am/bararan/paretoyi-kanon-orenq-skzbunq/

Առանձին հեղինակներ Լորենցի կորերի մոդելավորման և բնակչության փոքր խմբերի եկամուտների վրա անհավասարության ինդեքսների գնահատման համար առաջարկում են նորարարական մեթոդ, երբ առկա են (միայն) քվինտիլները: Այդպիսի մեթոդը հիմնված է պայմանական ակնկալիքի վրա՝ բացահայտելու եկամտի տարբեր մասնաբաժինները և, այդպիսով, մոդելավորելու Լորենցի կորը՝ գրականության մեջ արդեն առաջարկված ֆունկցիոնալ ձևերով: Լորենցի այս կորից կարելի է ստանալ անհավասարության ինդեքսներ (Gini, Pietra, Theil): Այս մեթոդը գնահատելու և կիրառված մյուս մեթոդների հետ համեմատելու համար կատարվում է սիմուլյացիոն հետազոտություն: Մեթոդը լուսաբանելու համար ներկայացվում է իրական տվյալների վրա հիմնված օրինակ[2]:

Գրականության մեջ ուշադրություն է դարձվում եկամտի անհավասարության Պալմայի հարաբերակցությանը՝ նախքան հարկերը (Palma ratio before tax): Պալմայի հարաբերակցությունը անհավասարության չափանիշ է, որը ստացվում է ամենահարուստ 10%-ի ստացած մասնաբաժինը ամենաաղքատների 40%-ի մասնաբաժնին բաշխելու միջոցով: Ավելի բարձր արժեքները ցույց են տալիս ավելի մեծ անհավասարություն[3]:

Մասնագիտական գրականության մեջ զգալի ուշադրություն է դարձվում բնակչության եկամուտների և նրանց առանձին խմբերի գնահատմանը: Այսպես օրինակ՝ գնահատվում է եկամուտների անհավասարության էվոլյուցիան եվրոպական 38 երկրում՝ 1980-ից մինչև 2017 թ. ընկած ժամանակահատվածում՝ համադրելով հարցումները, հարկային տվյալները և ազգային հաշիվները: Առանձին հեղինակների նպատակն է մշակել ներդաշնակեցված մեթոդաբանություն՝ օգտագործելով մեքենայական ուսուցումը, ոչ գծային հետազոտության բնակչության չափորոշումը և ծայրահեղ արժեքների տեսությունը, որպեսզի ստացվեն բնակչության եկամուտների անհավասարության միատարր գնահատականներ՝ տարբեր երկրներում առկա ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով: Եվրոպական երկրների մեծ մասում բնակչության եկամուտների անհավասարություններն աճել են ինչպես եկամուտների բաշխման վերին, այնպես էլ ստորին հատվածում, հատկապես՝ 1980-ից 2000 թվականներին: Եվրոպական երկրների բնակչության եկամուտների բաշխման սանդղակում վերին 1%-ն աճել է ավելի քան երկու անգամ ավելի արագ, քան ստորին 50%-ը և դրանով իսկ ապահովել տարածաշրջանի երկրների բնակչության եկամտի 17%-ը: Եվրոպայում հարաբերական աղքատությունը 1980 թ-ի 20%-ից 2017 թ-ին հասել է 22%-ի: Ըստ որում, բնակչության եկամուտների անհավասարությունները դեռևս մնում են ավելի ցածր և շատ ավելի քիչ են աճել Եվրոպայում, քան ԱՄՆ-ում: Վերլուծությունում մշակվել է նոր մեթոդաբանություն, որը համադրում է հարցումները, հարկային տվյալները և ազգային հաշիվները՝ եվրոպական բոլոր երկրների համար 1980–2017 թվականներն ընդգրկող եկամուտների անհավասարու-

---

[2] Enora Belz, Estimating Inequality Measures from Quantile Data, Univ Rennes, CNRS, CREM UMR 6211, F-35000 Rennes, France, 2019, p. 1, ffhalshs-02320110, https://shs.hal.science/halshs-02320110/file/Belz_Estimating-Inequality-Measures-from-Quantile-Data_2019.pdf

[3] Our world in data, Income inequality: Palma ratio (before tax), https://ourworldindata.org/grapher/palma-ratio-s90s40-ratio?tab=chart&country=ARM~AZE~GEO

թյան վիճակագրություն ստեղծելու նպատակով[4]:

Առանձին ուսումնասիրություններում ներկայացվում է Ասիայում բնակչության եկամուտների անհավասարության էվոլյուցիան 1993-ից մինչև 2019 թվականն ընկած ժամանակահատվածում՝ օգտագործելով Ասիայի բաշխման ազգային հաշվի (DINA) վերջին (նախնական) արդյունքները: Վերջին երեք տասնամյակների ընթացքում ասիական տարածաշրջանում նկատվում է անհավասարության նվազում, մինչդեռ երկրների մեծ մասում առկա են տնտեսական աճի և բնակչության եկամուտների անհավասարության խիստ տարբեր օրինաչափություններ: Հնդկաստանում և Չինաստանում բնակչության առանձին խմբերի միջև եկամուտների անհավասարությունը սկսեց զգալիորեն աճել 1990-ականներին և 2000-ականների սկզբին, այնուհետ կայունացավ Չինաստանում, մինչդեռ շարունակեց աճել Հնդկաստանում, ինչը վկայում է, որ զարգացումը և տնտեսական աճի ավելի բարձր տեմպերը բավարար չեն ստեղծված արդյունքի արդարացի բաշխման գործում, կարևոր է նաև արդյունքի բաշխման ազգային-տնտեսական քաղաքականությունը[5]:

Մասնագիտական գրականության մեջ փորձեր են արվում միավորելու բնագավառի վերաբերյալ բոլոր առկա հետազոտությունները՝ 1980-ից մինչև 2017 թվականների եկամտահարկի և ազգային հաշիվների տվյալներով եվրոպական 26 երկրում նախահարկային և հետհարկային եկամուտների անհավասարության շարքեր ստեղծելու համար: Անհավասարությունն աճել է գրեթե բոլոր եվրոպական երկրներում, բայց շատ ավելի քիչ, քան ԱՄՆ-ում: Այս աճը կենտրոնացած էր եկամուտների բաշխման վերին մասում և առավել ակնհայտ էր Արևելյան Եվրոպայում: Հակառակ տարածված տեսակետի՝ առանձին հեղինակներ ցույց են տալիս, որ Եվրոպայի անհավասարության ցածր մակարդակը չի կարող բացատրվել հարկերի և բաշխման ավելի հավասարեցված համակարգերով: Անուղղակի հարկերի և բնաիրային փոխանցումների հաշվառումից հետո ԱՄՆ-ն ազգային եկամտի ավելի մեծ մասնաբաժին է վերաբաշխում ցածր եկամուտ ունեցող խմբերին, քան եվրոպական ցանկացած երկիր: «Նախաբաշխումը», այլ ոչ թե «վերաբաշխումն» է բացատրում, թե ինչու է Եվրոպան պակաս անհավասար, քան Միացյալ Նահանգները[6]:

Բնակչության եկամուտների բաշխման հիմնախնդիրների բացահայտման գործում առանձին հեղինակներ նպատակ են դրել պարզելու Հոնկոնգի աճող տնտեսական անհավասարության և քաղաքական փոփոխությունների էվոլյուցիան, ինչպես նաև այդ երևույթների ինստիտուցիոնալ արմատները: Այդ նպատակին հասնելու համար կարևորվել է երկու հանգամանք: Նախ՝ տվյալների մի քանի աղբյուրների (տնային տնտեսությունների հարցումներ,

---

[4] Տե՛ս **Blanchet Th.,** Lucas Chancel, Amory Gethin, How Unequal Is Europe? Evidence from Distributional National Accounts, 1980–2017, April 2019, WID.world WORKING PAPER № 2019/06, էջ 58, https://wid.world/document/bcg2019-full-paper/

[5] Տե՛ս **Yang L.**, What's New about Income Inequality Data in Asia?, World Inequality Lab - Issue Brief 2020-08, November 2020, էջ 1, https://wid.world/document/whats-new-about-income-inequality-data-in-asia/

[6] **Blanchet Th.,** Lucas Chancel, Amory Gethin, Why is Europe More Equal than the United States?, 9 November 2021, World Inequality Lab – Working Paper № 2020/19, էջ 2, https://wid.world/document/why-is-europe-more-equal-than-the-united-states-world-inequality-lab-wp-2020-19/

հարկաբյուջետային տվյալներ, հարստության վարկանիշ, ազգային հաշիվներ) և նորարարական մեթոդաբանությունները համատեղելով՝ իրականացվել է աշխատավարձի անհավասարության էվոլյուցիայի, կապիտալի մասնաբաժնի, ինչպես նաև հարստության կենտրոնացման համապարփակ վերլուծություն: Հաշվարկները ցույց են տալիս, որ վերջին չորս տասնամյակների ընթացքում Հոնկոնգում եկամուտների և հարստության անհավասարության մեծ աճ է գրանցվել: Երկրորդ՝ հիմնվելով սոցիարցման վերջին տվյալների վրա՝ արձանագրվում է, որ բիզնես վերնախավը, որն անհամաչափ կշիռ ունի Հոնկոնգի Օրենսդրական խորհրդում, ավելի հավանական է, որ քվեարկի իշխող ուժերի օգտին, քանի որ նրանք կապահովեն իրենց քաղաքական և տնտեսական շահերին համահունչ քաղաքականության մշակումը: Ներկայումս Հոնկոնգում եկամուտների անհավասարությունը մնում է այնպիսի բարձր մակարդակի վրա, որն այլևս համեմատելի չէ բարձր եկամուտ ունեցող երկրների հետ[7]:

Հետազոտության մեթոդաբանություն: Վիճակագրական հաշվետվությունների «Կենսամակարդակ» բաժնում զետեղված են տվյալներ մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի, կենսաթոշակառուների թվաքանակի և թոշակի միջին չափերի վերաբերյալ:

Սկսած 2018 թ-ից՝ միջին աշխատավարձի հաշվարկման տեղեկատվական աղբյուրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնական հաշվառման տվյալների բազան է[8]:

Միջին աշխատավարձի վերաբերյալ ստորև ներկայացվող ցուցանիշները.

- ներառում են մեկ և ավելի վարձու աշխատող ունեցող բոլոր կազմակերպությունների տվյալները, բացառությամբ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի Բաժին Ս «Օտարերկրյա (էքստերիտորիալ) կազմակերպությունների գործունեություն» իրականացնող միավորների,
- ներառում են արտաքին համատեղությամբ աշխատողների աշխատանքի վարձատրությունը,
- չեն ներառում զինվորականների աշխատանքի վարձատրությունը.
- չեն ներառում բացառապես քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողների աշխատանքի վարձատրությունը:

2017–2018 թթ. աշխատավարձի ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով սույն հրապարակման մեջ ներկայացվում է նաև 2017 թ. ցուցանիշը՝ ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների բազայի:

---

[7] Տե՛ս **Piketty Th., Yang L.,** Income and Wealth Inequality in Hong Kong, 1981-2020: The Rise of Pluto-Communism?, July 2022, World Inequality Lab – Working Paper N° 2022/10, էջ 4, https://wid.world/document/income-and-wealth-inequality-in-hong-kong-1981-2020-the-rise-of-pluto-communism-world-inequality-lab-working-paper-2022-10/

[8] Մանրամասների համար տե՛ս http://www.armstat.am/file/article/sv_02-18a_142.pdf հղումը: Տեղեկատվական սույն աղբյուրի շրջանակում ԱՐՄՍՏԱՏ-ին հասանելի սկզբնական միավորը գործատուն է, այլ ոչ թե վարձու աշխատողը:

Անվանական աշխատավարձը վարձու աշխատողի համախառն վարձատրությունն է՝ հաշվի առած ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պահումները:

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկված գումարները (դրամական և բնեղեն արտահայտությամբ) հարաբերելով տվյալ ժամանակահատվածի աշխատողների միջին թվաքանակին և ամիսների թվին:

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները ներառում են.

ա) աշխատած ժամանակահատվածի համար վարձատրությունը, այդ թվում նաև ցանկացած լրացուցիչ վարձատրությունը՝ պարգևատրում, հավելավճար, լրավճար, հատուցման վճար,

բ) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում չաշխատած ժամանակահատվածի համար վարձատրությունը (ամենամյա և նպատակային արձակուրդները և այլն),

գ) միանվագ տրվող խրախուսական և այլ վճարներ,

դ) սննդի, բնակարանի, վառելիքի համար տրվող և այլ համանման վճարներ:

Միջին աշխատավարձի ցուցանիշն ըստ տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է՝ համաձայն տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏԴ խմբ. 2):

Իրական աշխատավարձը բնութագրում է անվանական աշխատավարձի գնողունակությունը դիտարկվող ժամանակահատվածում, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով՝ ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից:

Իրական աշխատավարձի ինդեքսը հաշվարկվում է միջին ամսական անվանական աշխատավարձի ինդեքսը հարաբերելով սպառողական գների ինդեքսին:

Ամսական կենսաթոշակի (նպաստի) միջին չափը հաշվարկվում է աշխատանքի և սոցիալական պաշտպանվածության մարմիններում հաշվառման կանգնած բոլոր կենսաթոշակառուներին (նպաստ ստացողներին) նշանակված ամսական կենսաթոշակի (նպաստի) ընդհանուր գումարը նրանց թվաքանակին հարաբերելով[9]:

Հիմք ընդունելով եկամուտների բաշխման վիճակագրական տվյալները և ի տարբերություն բնակչության եկամուտների բաշխման դեցիլային կամ քվինտիլային մոտեցումների՝ կիրառվել է նոր մոտեցում, ըստ որի եկամուտները կամ սպառումը բաժանվել են 3՝ «աղքատ», «միջին», «հարուստ» խմբերի: Ի տարբերություն եկամուտների վիճակագրական բաշխման՝ այդպիսի մոտեցումն առավել ճշգրտորեն է բնութագրում բնակչության եկամուտների բաշխման համամասնությունը բնակչության տարբեր խմբերի միջև:

Վերլուծություն: Հայաստանի Հանրապետության բնակչության դրամական եկամուտների և սպառողական ծախսերի կազմն ու կառուցվածքը 2012–2021 թթ. ներկայացված է աղյուսակ 1-ում: Ըստ աղյուսակի՝ նշված ժամանա-

[9] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, էջ 118-120:

կահատվածում բնակչության դրամական եկամուտների կազմն ու կառուցվածքը զգալիորեն բարելավվել է: Դրանով հանդերձ՝ կարևոր է դառնում բնակչության առանձին խմբերի դրամական եկամուտների և սպառողական ծախսերի վերլուծությունը, նկատի ունենալով, որ ցանկացած հասարակություն, այդ թվում նաև հայ հասարակությունը, բազմաշերտ է, և յուրաքանչյուրն ունի ապրելակերպի իր կենսական պայմանները: Ըստ որում՝ այդ կենսապայմանների հիմքում ինչպես դրամական եկամուտների մեծությունն ու բաշխման հարաբերություններն են, այնպես էլ դրանց հիման վրա սպառողական ծախսեր իրականացնելու հնարավորությունները:

Աղյուսակ 1

ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների ու սպառողական ծախսերի կազմը մեկ շնչի հաշվով (դրամներով) և դրանց կառուցվածքը (տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ)[10]

	2012	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Բոլոր տնային տնտեսությունների միջինը մեկ շնչի հաշվով, ամսական, դրամ								
Դրամական եկամուտները, ընդամենը	39056	52377	56544	58474	61047	61076	71182	76058
Այդ թվում՝								
Աշխատանքային եկամուտներ	23491	33642	36993	37773	39165	37733	46177	48440
Սոցիալական տրանսֆերտներ	7192	9284	9569	9932	9945	10046	12346	11548
Եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	2223	2674	2956	3491	4509	5125	6655	7571
Այլ դրամական մուտքեր	6150	6777	7027	7278	7428	8172	6004	8499
Սպառողական ծախսեր	34921	42867	43978	44413	45788	47324	46803	49999
Այդ թվում՝								
Պարենային ապրանքների, ներառյալ՝ ծխախոտի վրա	18500	20356	20115	20416	20471	20955	20404	25884
Ոչ պարենայինի վրա	6159	8074	80732	8497	8644	11327	11735	10143
Ծառայությունների վրա	10262	14437	15131	15500	16673	15042	14664	13972
Դրամական եկամուտները, ընդամենը	100	100	100	100	100	100	100	100
Այդ թվում՝								
Աշխատանքային եկամուտներ	60.1	64.2	65.5	64.6	64.1	61.8	64.9	63.7
Սոցիալական տրանսֆերտներ	18.4	17.7	16.9	17	16.3	16.4	17.3	15.2
Եկամուտներ բոլոր տեսակի վաճառքներից	5.7	5.1	5.2	6	7.4	8.4	9.4	10.0
Այլ դրամական մուտքեր	15.8	13.0	12.4	12.4	12.2	13.4	8.4	11.1
Սպառողական ծախսեր	100	100	100	100	100	100	100	100
Այդ թվում՝								
Պարենային ապրանքների, ներառյալ՝ ծխախոտի վրա	53.0	47.5	45.7	45.9	44.7	44.3	43.6	51.8
Ոչ պարենայինի վրա	17.6	18.8	19.9	19.2	18.9	23.9	25.1	20.3
Ծառայությունների վրա	29.4	33.7	34.4	34.9	36.4	31.8	31.3	27.9

Բնակչության եկամուտների (ծախսերի) տարբերակման համար կիրառվում է «բևեռային» քվինտիլների հարաբերության գործակիցը, որը բնութագրում է 20% առավել ապահովված բնակչության եկամուտների (ծախսերի) մա-

[10] Կազմվել է ըստ՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք - 2017, Եր., ՀՀ ԱՎԿ, էջ 102-103, ՀՀ վիճակագրական տարեգիրք - 2022, Եր., ՀՀ ԱՎԿ, էջ 142-143:

կարդակի հարաբերությունը 20% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների (ծախսերի) մակարդակին: Համաձայն այդ գնահատականի՝ 2021 թ., 1996 թ. համեմատությամբ, նվազել է 20 տոկոս ամենաապահով և 20 տոկոս ամենաաղքատ բնակչության եկամուտների հարաբերակցությունը՝ 39.5-ից հասնելով 7.3 անգամի, իսկ ըստ դեցիլային խմբերի բնակչության եկամուտների մասով՝ 1996 թ. 152.6-ից 2021 թ. հասնելով 14.1 անգամի: Ըստ սպառողական ծախսերի դեցիլային գնահատման՝ այդ ցուցանիշները կազմել են 1996 թ. 16.7 անգամից մինչև 2021 թ. 8.6 անգամը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության 20% ամենաապահով և 20% ամենաաղքատ բնակչության եկամուտների, 10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ բնակչության եկամուտների և 10% ամենաապահով և 10% ամենաաղքատ բնակչության ծախսերի հարաբերակցությունը, 1996–2022 թթ.[11]

	1996	1999	2001	2005	2010	2015	2017	2018	2019	2020	2021	2022
Ըստ դրամական եկամուտների	20% ամենաապահով և 20% ամենաաղքատ բնակչության եկամուտների հարաբերակցությունը, անգամ											
	39.5	32.7	13.8	6.8	9	7.8	9.2	9.2	8.6	7.2	7.3	7.1
Ըստ դրամական եկամուտների	10% ամենաապահով և 10% ամենաաղքատ բնակչության եկամուտների հարաբերակցությունը											
	152.6	115.5	26.3	17.7	13.9	16.1	17.2	15.2	17.4	14.4	14.1	13.2
Ըստ սպառողական ծախսերի	10 տոկոս ամենաապահով և 10 տոկոս ամենաաղքատ բնակչության ծախսերի հարաբերակցությունը, անգամ											
	16.7	9.7	7.5	9.8	8.2	8.9	9.9	9.4	9.2	8.3	8.6	7.4

Բնակչության եկամուտների (ծախսերի) «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցն առավել ակնհայտ է ցուցադրում երևույթի բնութագրական կողմերը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում զգալիորեն ավելացել են առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների՝ ոչ պարենային ապրանքների ձեռքբերման և ծառայություններից օգտվելու համար կատարվող ծախսերը: Պարզ է, որ առաջին դեցիլի բնակչության համեմատությամբ տասներորդ դեցիլի տնային տնտեսություններն ավելի են օգտվում թե՛ ծառայություններից և թե՛ ձեռք բերում ոչ պարենային ապրանքներ:

Բնակչության եկամուտների ձևավորման և ծախսերի բաշխման ոլորտում պետության վարած սոցիալական քաղաքականության գլխավոր սկզբունքը կարելի է ձևակերպել այսպես. «Բոլորը չեն կարող լինել հարուստ, սակայն ոչ ոք չպետք է լինի աղքատ»: Դա նշանակում է, որ շուկայական տնտեսության պայմաններում հարստությունը ձեռք են բերում անհատական նախաձեռնությամբ և քրտնաջան գործունեությամբ, իսկ աղքատությունից պաշտպանվում են բոլորը միասին՝ համատեղ: Առաջին մոտեցումը հիմնված

[11] Այս և հաջորդ աղյուսակները կազմվել և հաշվարկվել են ըստ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2002, էջ 93-94, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 95, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 92, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 106, 108, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., ՀՀ ԱՎԿ, 2017, էջ 103,105, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022, Եր., ՀՀ ԱՎԿ, 2022, էջ 143, 145, https://armstat.am/am/?nid=157&id=945

է ազատական (լիբերալ), իսկ երկրորդը՝ սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական մոդելների կիրառման վրա: Մեր օրերում խնդիրը դրանց արդյունավետ զուգակցումն է: Այսինքն՝ շուկայական տնտեսությունը կառուցված է այնպես, որ ուժեղը, նախաձեռնողը ստանա շուկայի աջակցությունը, իսկ թույլը՝ պետության: Ազատությունը՝ ուժեղներին, պաշտպանությունը՝ թույլերին. այսպիսին է շուկայական արժեքների վրա կառուցված հասարակության դասական և բարձրագույն ռազմավարությունը[12]:

Մեր հանրապետությունում 1996–2021 թթ. ժամանակահատվածում շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման ընթացքում հասարակության ներսում սոցիալական անհավասարության գործակիցը (բնակչության ամենաապահով 10%-ի եկամուտների հարաբերությունը բնակչության ամենաաղքատ 10%-ի եկամուտներին) կտրուկ նվազել է: Պաշտոնական տվյալներով, եթե, օրինակ՝ 2005 թ. Հայաստանի Հանրապետությունում այդ գործակիցը (աղյուսակ 2) միջինում կազմել է 17.7 անգամ (եթե հաշվի առնենք նաև տնտեսության առնվազն 50%-անոց ստվերայնությունը[13], ապա այդ թիվը կկազմի ավելի քան 25 անգամ): Տեղին է նաև հիշել, որ այդ գործակիցը համարվում է «նորմալ», երբ դրա մեծությունը չի գերազանցում 6-7 անգամը:

Աղյուսակ 3

Հայաստանի Հանրապետության բնակչության ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի, 1996–2021 թթ., %

Դեցիլներ		Մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերը										
		1996	1999	2001	2005	2010	2015	2017	2018	2019	2020	2021
Ամենաաղքատ	I	2.1	3	3.4	2.9	3.3	3.2	3.1	3.3	2.9	3.3	3.1
	II	3.4	4	5.3	4.4	4.7	4.5	4.5	4.6	4.4	4.6	4.6
	III	4.3	5	6.5	5.5	5.7	5.5	5.3	5.6	5.6	5.7	5.7
	IV	5.2	6	7.2	6.4	6.6	6.4	6.2	6.4	6.7	6.7	6.7
	V	6.2	7	7.8	7.3	7.6	7.5	7.1	7.3	7.7	7.7	7.6
	VI	7.5	8	9.2	8.5	8.7	8.6	8.2	8.2	8.8	8.7	8.7
	VII	9.1	10	10.3	9.9	9.9	9.9	9.5	9.3	10.1	9.9	10.0
	VIII	11.5	12	11.0	11.8	11.7	11.6	11.2	10.8	12.0	11.6	12.0
	IX	15.7	16	13.8	14.8	14.7	14.3	14.3	13.5	15.0	14.3	14.9
Ամենահարուստ	X	35.0	29	25.5	28.5	27.1	28.6	30.6	31.0	26.8	27.5	26.7

Հայաստանի Հանրապետության բնակչության ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի 1996–2021 թթ. ներկայացված է աղյուսակ 3-ում: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ամենաաղքատ դեցիլի բաժինը 1996 թ. 2.1%-ից 2021 թ. հասել է 3.1%-ի: Ըստ որում՝ աճ է նկատվել մինչև VIII դեցիլը ներառյալ, իսկ IX և X դեցիլների կշիռը նկատելիորեն նվազել է: Այլ կերպ ասած՝ իրականացվել է արդարացի սոցիալական քաղաքականություն բնակչության տարբեր խմբերի ծախսերի տարբերությունը մեղմելու ուղղությամբ:

---

[12] Տե՛ս **Մարկոսյան Ա.,** Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., «Տիգրան Մեծ», 2001, էջ 127:

[13] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական զեկույց: Ըստ 2004 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների: Եր., ՀՀ ԱՎԾ և Համաշխարհային բանկ, 2006, էջ 102: Համաձայն նշված աղբյուրի՝ ՏՀԶԿ երկրների ստվերային տնտեսության բաժինը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 17, ԱՊՀ երկրներում՝ 40, ամենաբարձրը ԱՊՀ երկրներից՝ Վրաստանում (68%), իսկ անցումային տնտեսությամբ երկրներում տնտեսության ստվերայնության ամենացածր մակարդակ դիտվել է Չեխիայում և Սլովակիայում (20%):

Համանման պատկեր է դիտվում ՀՀ բնակչության եկամուտների ըստ դեցիլային խմբերի բաշխման գործում (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների բաշխումն ըստ դեցիլային խմբերի, 1996–2021 թթ., %

Դեցիլներ		Մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները										
		1996	1999	2001	2005	2010	2015	2017	2018	2019	2020	2021
Ամենաաղքատ	I	0.3	0.4	1.5	1.6	2.1	2.0	1.7	2.0	1.6	1.9	2.0
	II	1.3	1.5	3.0	3.2	3.5	3.6	3.6	3.5	3.7	3.8	3.7
	III	2.3	2.5	3.4	4.5	4.9	4.9	4.9	4.8	5.3	5.1	5.1
	IV	3.3	3.5	5.1	5.8	6.1	6.0	6.0	5.9	6.5	6.1	6.3
	V	4.4	4.9	5.9	7.2	7.6	7.3	7.1	7.2	7.6	8.0	7.5
	VI	5.9	6.2	6.5	8.8	8.3	8.2	8.4	8.5	8.4	8.9	8.7
	VII	8.0	8.1	9.0	10.5	10.2	9.6	10.1	10.2	10.9	10.7	10.3
	VIII	11.3	10.7	10.6	13.0	12.3	11.7	12.5	12.2	12.6	12.0	12.5
	IX	17.4	16.0	15.6	17.0	15.8	14.7	16.4	15.3	15.6	16.2	15.7
Ամենահարուստ	X.	45.8	46.2	39.4	28.4	29.1	32.2	29.3	30.4	27.8	27.4	28.2

Եկամուտների բաշխումն ըստ քվինտիլային խմբերի ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումն ըստ քվինտիլային խմբերի, 1996–2021 թթ., %

	1996	1999	2001	2005	2010	2015	2017	2018	2019	2020	2021
Դրամական եկամ.	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Այդ թվում՝ ըստ 20% խմբի											
Առաջին (առավել քիչ եկամուտներով)	1.6	1.9	4.0	6	5	6	5	5	5	6	6
Երկրորդ	5.6	6.0	9.0	13	11	11	11	11	12	12	11
Երրորդ	10.3	11.1	12.0	17	16	15	16	16	16	17	16
Չորրորդ	19.3	18.8	20.0	23	23	21	22	22	24	22	23
Հինգերորդ (առավել շատ եկամուտներով)	63.2	62.2	55.0	41	45	47	46	46	43	43	44
Ընթացիկ եկամուտների համակենտրոնացման գործակիցը (Ջինիի ինդեքսը)	0.602	0.593	0.535	0.359	0.362	0.374	0.359	0.360	0.381	0.363	0.364

2006 թ. և 2007 թ. ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրատարակված Հայաստանի վիճակագրական տարեգրքում, ըստ պաշտոնական վիճակագրության, 1996 թ. տվյալների «ներմուծումը» 1999 թ. ցուցանիշների փոխարեն (ինչը բերված է 2006 թ. տարեգրքի էջ 95-ում և 2007 թ. տարեգրքի էջ 90-ում՝ բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի) պատահականություն չէ. միտումնավորություն կամ «փոքրիկ խորամանկություն» է: Բանն այն է, որ, եթե ուշադիր ուսումնասիրենք 2002–2006 թթ. բերված ցուցանիշները, ապա ակնհայտ կդառնա քաղաքականության ոչ սոցիալական ուղղվածությունն այն իմաստով, որ երրորդ և չորրորդ խմբերի դրամական եկամուտները մնացել են անփոփոխ, համապատասխանաբար՝ 17% և 23%, իսկ 2006 թ. դրանք նվազել են՝ կազմելով 16% և 22%): Երկրորդ քվինտիլում նկատվել է

եկամուտների նվազում 2 տոկոսային կետով (2002 թ. 14%-ի փոխարեն 2006 թ. կազմել է ընդամենը 12%), իսկ առավել քիչ եկամուտներով առաջին խմբում դրամական եկամուտները նվազել են 1 տոկոսային կետով (2002 թ. 9%-ի փոխարեն այդ ցուցանիշը 2006 թ. կազմել է 8%), առավել շատ եկամուտներով հինգերորդ խմբում դրամական եկամուտներն ավելացել են 5 տոկոսային կետով (2002 թ. 37%-ի փոխարեն 2006 թ. կազմել է 42%): Ասվածն ավելի ակնառու դարձնելու համար նախ՝ հասարակությունը բաժանենք 2 խմբի՝ 50:50 հարաբերակցությամբ, և 3 խոշոր խմբերի՝ աղքատների, միջին խավի և հարուստների: Օգտվենք նաև նախկին մեթոդական մոտեցումներից. առաջին դեպքում «երրորդ» սահմանային քվինտիլային խումբը բաժանենք 2 հավասար մասերի՝ կեսը տալով առաջին խմբին, իսկ երկրորդ կեսը՝ երկրորդ խմբին, երկրորդ դեպքում՝ սահմանային երկրորդ քվինտիլային խմբի եկամուտների կեսը՝ առաջին խմբին, երկրորդ կեսը՝ երկրորդ խմբին, չորրորդ սահմանային խումբը նույնպես հավասարաչափ բաժանենք երկրորդ և երրորդ խմբերի միջև, արդյունքում կունենանք աղյուսակներ 6-ում և 7-ում առկա պատկերը:

Աղյուսակ 6

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումը՝ համաձայն քվինտիլային խմբերի ըստ աղքատների և ոչ աղքատների 1996–2010 թթ., %

Բնակչության խմբերը	1996	1999	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	1996-2010 թթ.-երի միջինը
Աղքատներ	12.35	13.45	19	31.5	23.5	27	27.5	28	28.5	29.5	29	24	**26.1**
Ոչ աղքատներ	87.65	86.55	81	68.5	76.5	73	72.5	72	71.5	70.5	71	76	**73.9**
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	**100**

Աղյուսակ 7

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումը՝ համաձայն քվինտիլային խմբերի ըստ աղքատների և ոչ աղքատների 2011-2021 թթ., %

Բնակչության խմբերը	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2011-2021 թթ. միջինը
Աղքատներ	30	28.5	30	28.5	24.5	23	24	24	25	26.5	25	**26.3**
Ոչ աղքատներ	70	71.5	70	71.5	75.5	77	76	76	75	73.5	75	**73.7**
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	**100**

Աղյուսակ 8

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումը՝ համաձայն քվինտիլների ըստ 3 խմբերի 1996–2010 թթ., %

Բնակչության խմբերը	1996	1999	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	1996-2010 թթ. միջինը
Աղքատներ	5.4	5.9	10.0	18.4	12.4	15.0	14.7	16.0	15.7	16.4	15.7	12.4	**5.4**
Միջին	18.5	19.3	21.6	29.2	25.9	27.2	28.9	27.2	29.2	29.5	30.5	27.2	**18.5**
Հարուստներ	76.1	74.8	68.4	52.4	61.7	57.7	56.4	56.7	55.1	54.1	53.8	60.4	**76.1**
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	**100**

Աղյուսակ 9

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումը՝ համաձայն քվինտիլների ըստ 3 խմբերի 2010-2021 թթ., %

Բնակչության խմբերը	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2011-2021 թթ. միջինը
Աղքատներ	16.4	15.7	16.4	15.7	13.4	11.7	12.4	12.4	13.0	14.0	13.4	**14.0**
Միջին	30.5	28.9	30.2	28.9	25.6	26.9	26.9	26.9	27.9	28.2	27.2	**28.0**
Հարուստներ	53.1	55.4	53.4	55.4	61.1	61.4	60.7	60.7	59.1	57.7	59.4	**58.0**
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	**100**

Տվյալների վերլուծությունից հետևում է, որ թեև 1996–2002 թթ. Զգալիորեն ավելացել է «աղքատ» բնակչության բաժինը դրամական եկամուտների կազմում, սակայն հաջորդ տարիներին բնակչության այս խմբի եկամուտները նվազել են՝ 2021 թ. հասնելով 25 տոկոսի, կամ նվազումը կազմել է 6.5 տոկոսային կետ, իսկ նույնքան էլ ավելացել են «ոչ աղքատների» եկամուտները:

Կարելի է պնդել, որ խոշոր քաղաքներում բնակչության սոցիալական անհավասարությունն ավելի մեծ է: Ցավոք, ՀՀ պաշտոնական վիճակագրությունը բնակչության սոցիալական անհավասարության պատկերն ըստ առանձին՝ խոշոր քաղաքների չի առանձնացնում, ինչի արդյունքում հնարավոր կլիներ ավելի մանրամասն խոսել առանձին բնակավայրերի սոցիալական հիմնախնդիրների և, մասնավորապես, այդ բնակավայրերի բնակչության դրամական եկամուտների և սպառողական ծախսերի մակարդակների մասին: Այն երկրներում, որտեղ նման հաշվառում տարվում է, նկատվում է մեր կողմից նշված օրինաչափությունը:

Հասարակության ներսում գույքային անհավասարության կանոնակարգման նպատակով կիրառվում են ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական գործիքներ: Հայաստանի Հանրապետությունը գնաց առավելապես իրավական ճանապարհով, որի արդյունավետությունը և իրականացման տեմպերը խիստ կասկածելի են: Այսպես՝ 23.11.2023 թ. ՀՀ Կառավարության հերթական նիստում ՀՀ գլխավոր դատախազն անդրադարձել է պետական շահերի պաշտպանության ոլորտում իրականացվող աշխատանքներին, դատարան ներկայացված հայցերին և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում իրականացվող աշխատանքներին: Ըստ այդմ՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձվել է ապօրինի ծագում ունեցող շուրջ 1000 անշարժ և 200 շարժական գույք, 270 իրավաբանական անձում մասնակցություն: Ընդհանուր հայցագինը գերազանցում է 500 միլիարդ դրամը[14]:

Բերված տվյալներից դժվար չէ եզրակացնել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նման տեմպերի պայմաններում խիստ կասկածելի է դառնում առաջիկա տարիների ընթացքում սոցիալական անհավասարության էական կրճատումը:

Ակնհայտ է, որ մեզանում դեռևս չեն ստեղծվել պետական կառավարման այն մոտեցումները, որոնց իրականացման արդյունքում կունենանք ավելի պակաս աղքատներով հասարակություն: Ուրեմն՝ բնակչության դրամական եկամուտների անհավասարության «շան գլուխը» թաղված է ոչ թե արտադրության, այլ բաշխման և վերաբաշխման համակարգերում: Ասվածն

[14] Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազություն, նորություններ, https://www.prosecutor.am/article/4407

ավելի քան ճիշտ է, եթե նկատի ունենանք, որ պետական գույքի առաջին խոշոր գործարքներից հետո (1995 թ.) անցել է բավականին երկար ժամանակ, և այդ ընթացքում տեղի է ունեցել սեփականության վերաբաշխում մի քանի անգամ: Եվ բոլորը չէ, որ 15 տարի կամ մի փոքր ավելի ուշ «ձեռք գցած» սեփականության «լավ կտորները» պահպանել են, նրանց զգալի մասը հենց մասնավորեցման սկզբնական փուլերում էլ դրանք վաճառեցին: Մեր հասարակության սոցիալական անհավասարության պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց արմատները թաղված են նախկին Խորհրդային Միության արտադրական հարաբերությունների ընդերքում, և հետաքրքիրն այն է, որ այդ պատճառների մեծ մասն էլ առիթ դարձավ նախկին հզոր պետության քայքայման և կազմալուծման: Խորհրդային երկիրը քայքայվեց ներսից, հատկապես, երբ տնտեսական կյանք մտցվեցին այնպիսի տնտեսավարման ձևեր, որոնք սոցիալիզմի հակոտնյան էին, և դրանք չէին կարող կողք կողքի գոյություն ունենալ. խոսքը մասնավոր և հանրային սեփականության, մասնավոր նախաձեռնության և հանրային կառավարման սկզբունքների և այլնի մասին է:

1980-ական թվականների երկրորդ կեսին նախկին Խորհրդային Միությունում սկիզբ առած գորբաչովյան վերակառուցումը, շատ կարճ ժամանակահատվածում՝ ընդամենը 2-3 տարվա ընթացքում, հրապարակ իջեցրեց այնպիսի օրենքներ, որոնք էլ ներսից «վերացրին» երկիրը: Խոսքը, նախևառաջ, «Կոոպերացիայի մասին» և «Պետական ձեռնարկության (միավորման) մասին» ԽՍՀՄ օրենքներին է վերաբերում:

«Կոոպերացիայի մասին» օրենքը խորհրդային տարածքում առաջին անգամ օրինականացրեց ձեռնարկատիրությունը և ձեռնարկատերերին էլ առանձնացրեց որպես հասարակության կարևոր շերտ կամ, այլ կերպ ասած՝ այդ օրենքը թույլատրեց մասնավոր գործունեությունը և դրա արդյունքների օրինական իրացումը: Վերը նշված երկրորդ օրենքի շնորհիվ պետական ձեռնարկությունների (միավորումների) ղեկավարները փաստացի իրավունք ստացան ամբողջությամբ տնօրինելու իրենց ձեռնարկությունների (միավորումների) ինչպես գործունեության արդյունքները, այնպես էլ միջոցները: 1980-ական թվականների կեսերին ընդունված այս օրենքների գործողության ժամանակ խորհրդային հասարակարգի սոցիալական կառուցվածքն արդեն սկսել էր փոփոխվել, ինչն էլ հանգեցրեց բնակչության մեծամասնության զանգվածային աղքատության: Խորհրդային Միությունում բնակչության սոցիալական շերտավորումը գրեթե այնպիսին էր, ինչպիսին ներկայումս սկանդինավյան երկրներում է: Այն ժամանակ աղքատները, փաստորեն, ունեին գրեթե այնպիսի կենսամակարդակ, ինչպիսին հասարակության մյուս շերտերը: Երբ փոխվեցին «խաղի կանոնները», հասարակության զգալի մասը վերափոխումների սկզբից դրանք անարդար համարեց և չուզեց նման պայմաններում ապրել: Ավելին, բնակչության զգալի մասը անցումը կապիտալիստական հարաբերություններին համարում էր սխալ և ժամանակավոր նահանջ սոցիալիզմից: Շատերի կարծիքով այդ գործընթացը կարճ էր տևելու: Իսկ նրանք, ովքեր ժամանակը իզուր չկորցրին և իրենց ջանքերն ու եռանդը ներդրեցին գործի մեջ, «առաջ ընկան» և կապիտալի տեր դարձան: Այստեղից է գալիս սոցիալական նախանձն առավել հաջողակների նկատմամբ. չէ՞ որ նրանք ամեն ինչ ստացան «ոչ օրինական կանոններով»: Նույնը վերաբե-

րում է նաև պետական գույքի մասնավորեցմանը (սեփականաշնորհմանը): Ուստի, պատահական չէ, որ թեև մասնավորեցման հիմնական գործարքներն արդեն վաղուց ավարտվել են, սակայն մինչև օրս քաղաքական հայտարարություններ և կոչեր են հնչում՝ այդ գործընթացի արդյունքները վերանայելու և մասնավոր գույքը ազգայնացնելու: Նման մարտակոչեր հնչում են նախկին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետություններում:

Երրորդ հանրապետության անցած տարիներին կառուցած շուկայական տնտեսության բնորոշ բնութագրերից մեկը հարուստների կամ նրանց վերնախավի առկայությունն է: Եվ հարցն այն է, թե հնարավո՞ր է արդյոք նրանց շարքերը համալրել կամ գոնե մոտենալ նրանց: Այդ նպատակին հասնելու համար հատկապես երիտասարդ կադրերը պետք է ունենան համապատասխան կրթություն և այնպիսի արժանիքներ, որոնք համապատասխանում են գործարար վերնախավի միջավայրին և բնույթին: Մեծ քաղաքը, որպես բնակության վայր, անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ հարուստ լինելու կամ դառնալու համար:

Վերոգրյալից այն կարծիքը կարող է ձևավորվել, թե դեպի վերնախավ ձգտող երիտասարդների մեծ մասը նախօրոք արդեն «դատապարտված է» անհաջողության (սա միայն, միգուցե, առաջին հայացքից): Բանն այն է, որ համընդհանուր բարօրության պետություններում (այդ թվում՝ Եվրամիության բազմաթիվ երկրներում, որոնց ձգտում ենք հասնել նաև մենք) բնակչության սոցիալական անհավասարության մեղմման բազում մեխանիզմներ և միջոցներ կան: Օրինակ՝ հարուստները վճարում են տաղանդավոր ուսանողների ուսման վճարը, իսկ հարուստ մարդկանց եկամուտները հարկվում են պրոգրեսիվ եկամտահարկի սանդղակով:

Նմանատիպ կարծիք ունեն պետական ֆինանսների կառավարման բազմաթիվ մասնագետներ[15]:

Մեզանում կիրառվում էր պարզեցված սանդղակը, սակայն նույնիսկ դա լիարժեք չէր գործում, քանի որ իրական մեծ եկամուտներ ունեցողներն այն շրջանցելու բազմաթիվ ուղիներ էին գտել: Եվ այդ հարկերը հարկվում էին (են) հիմնական բնակչության այն մասից, որին պետությունը չպետք է այդքան «նեղի», այլ հակառակը, նրանց պետք է կամ պարտավոր է օգնել: Համընդհանուր բարօրության պետություններում, որպես կանոն, եկամտահարկ չի գանձվում նրանցից, որոնք ստանում են միջին եկամտի կեսից պակաս եկամուտ: Այդ մեծությունը հաշվարկվում է հետևյալ կերպ. վերցվում է ամբողջ բնակչության թվաքանակը և բաշխվում է աշխատած միջոցների մակարդակին համապատասխան. որտեղով անցնում է 50-րդ և 51-րդ տոկոսի գիծը, հենց դա էլ միջնարժեքն է՝ մեդիանան:

Միջազգային չափանիշերով աղքատությունը հաշվարկվում է ոչ թե ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնից, այլ վերը նշված եկամուտների միջնարժեքից ելնելով: Եթե օգտվենք այդպիսի չափանիշից, ապա աղքատները (շատ աղքատները և աղքատները) կկազմեն նվազագույնը 20.3%, իսկ եթե դրան ավելացնենք աղքատությանը սահմանակցողներին (միջինից ցածր ապրողներին) կստացվի 57.7%-ից ոչ պակաս:

[15] Տե՛ս, օրինակ՝ https://hetq.am/hy/article/155982

Ամենից շատ աղքատությունից «նեղվում» են կենսաթոշակառուները: Իհարկե, բացարձակ թվերով տարեցտարի նրանց եկամուտներն ավելանում են՝ ավելանում են թոշակների չափերը, տրվում են լրացուցիչ հավելավճարներ և նպաստներ: Սակայն նրանց եկամուտների աճը չի փոխհատուցում սպառողական ապրանքների և ծառայությունների զամբյուղի գների բարձրացումը: Աղքատության այդ բնութագիրը կոչվում է կենսամակարդակի առաջանցիկ վատացում:

Եզրակացություններ

➢ Բնակչության կենսամակարդակը բնորոշող ցուցանիշների համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում բնակչության դրամական եկամուտների (ծախսերի) մեծությունները: Ըստ էության, կենսամակարդակի մյուս բնութագրիչների շարքում (նվազագույն և միջին անվանական և իրական աշխատավարձ, կենսաթոշակի միջին մեծություն, նպաստներ և այլն) հիմնականում դրանք են պայմանավորում հասարակության ներսում եկամուտների (ծախսերի) բաշխման հարաբերությունների և բնակչության տարբեր շերտերի միջև եկամուտների (ծախսերի) հարաբերակցությունը: Հատկապես բնակչության աղքատ, միջին և հարուստ խավերի եկամուտների մեծության ձևավորման վրա էական ազդեցություն է թողնում աշխատանքի վարձատրությունը: Այսպես՝ եթե ՀՀ տնային տնտեսությունների եկամտի մեծությունը 2017 թ. կազմել է ամսական 58474 դրամ, ապա 2021 թ. կազմել է 76058 դրամ, իսկ աշխատանքի վարձատրության բաժինն այդ եկամուտներում կազմել է համապատասխանաբար՝ 64,6% և 63,7%[16]: Այլ կերպ ասած՝ ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների շուրջ 2/3-ը ձևավորվում է աշխատանքի վարձատրության հաշվին, ինչը նշանակում է, որ բնակչության դրամական եկամուտների վրա ազդելու հիմնական լծակն աշխատավարձն է: Այստեղից հետևում է, որ հենց աշխատավարձի մեծության միջոցով կարգավորումն արդյունավետ, ամենակարճ ուղին է բնակչության եկամուտների արդարացի բաշխման գործում: Իսկ աշխատավարձի մեծության վրա կարելի է ազդել եկամտային հարկի մեծության դրույքաչափը (ներկայումս գործում է 20% դրույքաչափը) ինչպես տարբերակելու, այնպես էլ փոփոխելու միջոցով: Այսպիսի մոտեցումն ավելի քան արդարացի է, քանի որ հարկային քաղաքականության և, մասնավորապես, հասարակության տարբեր խմբերի եկամուտների բաշխումն ու հանրային համագործակցությունն այն հիմքն են, որ ծառայում են ոչ միայն պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, այլև հասարակության տարբեր խավերի եկամուտների բաշխման արդարացի համամասնությունների ձևավորմանը, որը կապահովի բնակչության սոցիալական համերաշխությունը: Միայն այդ կերպ՝ բնակչության միջին խավի տեսակարար կշռի ավելացման միջոցով է (բնակչության ընդհանուր թվաքանակի առնվազն 50%-ի հասցնելու պայմանով) կարել է հասնել բնակչության տարբեր շերտերի շահերի ներդաշնակության և արդար պետության կայացման:

➢ Հայաստանի Հանրապետության 10% ամենահարուստ և 10% ամենաաղքատ բնակչության եկամուտների հարաբերակցությունը 1996–2022 թթ. ընթացքում 152,3 անգամից հասել է 13,2 անգամի, իսկ ծախսերի հարաբե-

[16] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2022, Եր., ՀՀ ԱՎԿ, էջ 142:

ռակցությունը 13,7 անգամից հասել է 7,64 անգամի, ինչը վկայում է հանրապետության բնակչության եկամուտների (ծախսերի) բաշխման դրական միտումների մասին: Դրանով հանդերձ՝ այդ հարաբերակցությունը դեռևս հեռու է լավագույնը լինելուց՝ 6-7 անգամից: Այսինքն՝ պետք է շարունակել բնակչության եկամուտների (ծախսերի) բաշխման ասպարեզում խելամիտ սոցիալական քաղաքականության իրականացումը, որը կնպաստի բնակչության հատկապես միջին խավի թվաքանակի և տեսակարար կշռի ավելացմանը՝ վերջնական նպատակ ունենալով այդ շերտի տեսակարար կշիռը հասցնել բնակչության ընդհանուր թվաքանակի առնվազն 50%-ի, դրանով իսկ ապահովելով ավելի արդարացի և կայուն հասարակության կայացմանը, ինչը բնակչության տարբեր շերտերի միջև համագործակցության և բարձր տնտեսական աճի սոցիալական հենարանն ու գրավականն է:

➢ Վերը նշված մոտեցումների գործնականում կիրառման տեսանկյունից, կարծում ենք, ՀՀ Կառավարության կողմից պետք է մշակվի հնգամյա ծրագիր «ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի բաշխման կատարելագործման մասին», որը յուրաքանչյուր տարի պետք է դառնա քննարկման առարկա (տվյալ տարվա հաշվետվության տեսքով): Առանձնահատուկ քննարկմամբ պետք է դիտարկվեն նախանշված առաջադրանքների կատարումը, բացթողումները և հաջորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Կարևոր է նկատել, որ տվյալ ծրագիրը պետք է նաև գնահատի հատկապես միջին խավի վերաբերյալ ցուցանիշները՝ թիրախում ունենալով այդ խավի բնակչության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները: Անհրաժեշտ է նաև հատուկ ուշադրություն դարձնել ՀՀ «բնակչության եկամուտների և ծախսերի հաշվեկշռին»՝ դա ներառելով վիճակագրական պարտադիր ցուցանիշների շարքում, ինչը կօգնի առավել ստույգ գնահատելու բնակչության տարբեր խավերի եկամուտների և ծախսերի մեծությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ մարզերի առումով սոցիալական մեծ կարևորություն ունեցող հիմնախնդրի կարգավորման գործում:

Օգտագործված գրականություն

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 09.06.2017 թ., ուժի մեջ մտած 20.11.2019 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=114355
2. Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 24.03.2021 թ., ուժի մեջ մտած 23.10.2021 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799
3. Հայաստանի Հանրապետության դատախազություն, նորություններ, https://www.prosecutor.am/article/4407
4. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական զեկույց: Եր., ՀՀ ԱՎԾ և Համաշխարհային բանկ, 2006:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006:
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2007:

8. ՀՀ ԱՎԿ, ՀՀ աղքատության հիմնական ցուցանիշները 2022 թվականին, https://armstat.am/am/?nid=157&id=945
9. ՀՀ վիճակագրական տարեգիրք - 2017, Եր., ՀՀ ԱՎԿ:
10. ՀՀ վիճակագրական տարեգիրք - 2022, Եր., ՀՀ ԱՎԿ:
11. ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2002:
12. ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 05.05.2021 թ., ուժի մեջ մտած 01.07.2022 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080
13. Մարկոսյան Ա., Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., «Տիգրան Մեծ», 2001:
14. Պարետոյի կանոն (Պարետոյի օրենք, Պարետոյի սկզբունք, 20/80 կանոն), https://imarketlab.am/bararan/paretoyi-kanon-orenq-skzbunq/
15. Blanchet Th., Chancel L., Gethin A., Why is Europe More Equal than the United States?, 9 November 2021, World Inequality Lab – Working Paper N° 2020/19, https://wid.world/document/why-is-europe-more-equal-than-the-united-states-world-inequality-lab-wp-2020-19/
16. Blanchet Th., Chancel L., Gethin A., How Unequal Is Europe? Evidence from Distributional National Accounts, 1980–2017, April 2019, WID.world WORKING PAPER N° 2019/06, https://wid.world/document/bcg2019-full-paper/
17. Enora Belz, Estimating Inequality Measures from Quantile Data, Univ Rennes, CNRS, CREM UMR 6211, F-35000 Rennes, France, 2019. ffhalshs-02320110, https://shs.hal.science/halshs-02320110/file/Belz_Estimating-Inequality-Measures-from-Quantile-Data_2019.pdf, էլ. ռեսուրսը առկա է 03.12.2023 թ. դրությամբ:
18. https://hetq.am/hy/article/155982
19. Our world in data, Income inequality: Palma ratio (before tax), https://ourworldindata.org/grapher/palma-ratio-s90s40-ratio?tab=chart&country=ARM~AZE~GEO
20. Piketty Th., Yang L., Income and Wealth Inequality in Hong Kong, 1981-2020: The Rise of Pluto-Communism?, July 2022, World Inequality Lab – Working Paper N° 2022/10, https://wid.world/document/income-and-wealth-inequality-in-hong-kong-1981-2020-the-rise-of-pluto-communism-world-inequality-lab-working-paper-2022-10/
21. Yang L., What's New about Income Inequality Data in Asia?, World Inequality Lab - Issue Brief 2020-08, November 2020, https://wid.world/document/whats-new-about-income-inequality-data-in-asia/

АШОТ МАРКОСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд» АГЭУ, доктор экономических наук, профессор

МЕРУЖАН МАРКОСЯН
Экономический аналитик общественной организации «Политологических, юридических и экономических исследований и прогнозирований», кандидат экономических наук

Оценка распределения доходов и расходов населения Республики Армения.– В системе показателей уровня жизни населения важное и незаменимое место занимают финансовые доходы населения, являющиеся основой осуществления расходов домохозяйств. С этой точки зрения важным является измерение и оценка как денежных доходов, так и расходов населения. Хотя обеспечение денежными доходами (расходами) населения по своей природе является важным инструментом социальной политики, оно должно обеспечивать их распределение в определенной пропорции между различными слоями населения. Данная проблема решается за счет распределения доходов (расходов) между децильными и квинтильными группами населения. Цель статьи - изучить распределение денежных доходов и расходов населения Республики Армения в 1996-2021 гг. Для достижения поставленной цели были решены следующие задачи:

- проанализировать непропорциональное распределение денежных доходов и расходов населения РА по отдельным децильным и квинтильным группам,
- выявить пробелы в этой области и их причины,
- сделать социальную политику целью и нацелить ее не только на сокращение бедности, но и на формирование среднего класса

Ключевые слова: *денежные доходы (расходы) населения, домохозяйства, распределение доходов и расходов, децильные группы населения (квинтильные группы), обеспеченные группы населения, неравномерное распределение доходов (расходов), формирование среднего класса*
JEL: E24, H31
DOI: 10.52174/29538114_2023.3-50

ASHOT MARKOSYAN
Senior Expert at "Amberd" Research Center, ASUE
Doctor of Economics, Professor

MERUZHAN MARKOSYAN
Economic analyst of the "Political, Legal and Economic Research and Forecasting" NGO,
PhD in Economics

Assessment of Income and Expenditure Distribution of the Population of the Republic of Armenia.– In the system of indicators measuring the living standards of the population, the financial income of the population has an important and irreplaceable position. It serves as the basis for household expenditures. From that point of view, it is important to measure and evaluate both monetary incomes and expenses of the population. Although, by its very nature, provision of monetary income (expenditure) of the population is an important tool of social policy, it should ensure their distribution in a certain proportion among different layers of the population. That problem is solved through the distribution of incomes (expenditures) between decile and quintile groups of the population. The objective of this paper is to study the distribution of monetary incomes and expenses of the population of the Republic of Armenia from 1996 to 2021. To achieve that goal, the following problems were addressed:

- analyze the disproportionate distribution of monetary incomes and expenses of the population of the RA population according to individual decile and quintile groups,
- identify gaps in that area and determine their causes,
- make social policy a target and aim not only at poverty reduction but also at the formation of the middle class.

Keywords: *monetary incomes (expenditures) of the population, households, distribution of incomes and expenses, decile groups of the population (quintile groups), well-off groups of the population, uneven distribution of incomes (expenditures), formation of the middle class*
JEL: E24, H31
DOI: 10.52174/29538114_2023.3-50